

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի

Հանրապետության Կառավարության միջև

հետընդունման (ռեադմիսիայի) մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Կողմերի պետությունների միջև բարիդրացիական, գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև տարբեր բնագավառներում, այդ թվում՝ անօրինական միգրացիայի և անդրսահմանային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցերում փոխադարձ համագործակցության ամրապնդման ձգտումով,

համոզված լինելով, որ Կողմերի պետությունների տարածքներում մուտքի, ելքի, այդ տարածքներում գտնվելու և բնակության կարգի խախտմամբ գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց փոխանցման, ընդունման և վերադարձման կարգը սահմանող՝ Կողմերի միջև համաձայնեցված սկզբունքների ու նորմերի իրագործումը միգրացիոն գործընթացների կարգավորման կարևոր բաղադրիչ է,

հարգելով Կողմ պետություններից յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքը՝ իր օրենսդրությանը համապատասխան սահմանել պատասխանատվություն իր տարածքում կամ դրանով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական միգրացիայի համար,

հաստատելով իրենց հավատարմությունը 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1951 թվականի հուլիսի 28-ի՝ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի և 1967 թվականի հունվարի 31-ի՝ Փախստականների կարգավիճակի մասին արձանագրության, 1984 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի և 1966 թվականի

դեկտեմբերի 16-ի՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, ինչպես նաև հանձնման (էքստրադիցիայի) հարցերով միջազգային պայմանագրերի հիմքում ընկած նպատակներին և սկզբունքներին, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սահմանումները

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

«հետընդունում»՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ելքի և գտնվելու հարցերին առնչվող՝ տվյալ պետության օրենսդրության խախտմամբ հայցող Կողմի պետության տարածք մուտք գործած կամ այդ պետության տարածքում գտնվող անձանց՝ սույն Համաձայնագրով նախատեսված կարգով, պայմաններով և նպատակներով հանձնումը հայցող Կողմի պետության իրավասու մարմինների կողմից և նրանց ընդունումը հայցվող Կողմի պետության իրավասու մարմինների կողմից,

«հայցող Կողմ»՝ Կողմ, որի պետության իրավասու մարմինը, սույն Համաձայնագրին համապատասխան, հետընդունման կամ տարանցման վերաբերյալ հայց է ուղարկում,

«հայցվող Կողմ»՝ Կողմ, որի պետության իրավասու մարմինն, սույն Համաձայնագրին Համապատասխան, հասցեագրվել է հետընդունման կամ տարանցման վերաբերյալ հայց,

«երրորդ պետության քաղաքացի»՝ Կողմերի պետությունների քաղաքացիություն չունեցող և սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետության քաղաքացիություն ունենալու մասին ապացույց ունեցող անձ,

«քաղաքացիություն չունեցող անձ»՝ անձ, որը չի հանդիսանում Կողմերի պետությունների քաղաքացի և չունի երրորդ պետության քաղաքացիություն

ունենալու ապացույցներ՝ բացառությամբ այն անձանց, որոնք զրկվել են մի Կողմի պետության քաղաքացիությունից մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելուց հետո, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի գործողությունը,

«իրավասու մարմիններ»՝ Կողմերի պետությունների մարմիններ, որոնց վերապահվում է սույն Համաձայնագրի իրականացումը,

«պետական սահմանի անցակետ»՝ Հայաստանի Հանրապետության կամ Բելառուսի Հանրապետության պետական սահմանի անցակետ, որը Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան սահմանվել է միջազգային օդանավակայաններում սահմանները հատելու համար,

«անձնական տվյալներ»՝ տեղեկություններ, որոնք վերաբերում են դրանց հիման վրա որոշված կամ որոշվող անձնական տվյալների սուբյեկտին, որոնք ամրագրված են էլեկտրոնային, թղթային և (կամ) այլ նյութական կրիչների վրա,

«տարանցում»՝ հայցվող Կողմի պետության տարածքով հայցող Կողմի պետությունից դեպի նշանակման պետություն երթուղիով երրորդ պետության քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի տեղափոխում:

Հոդված 2

Իրավասու մարմինները

1. Սույն Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու իրավասու մարմիններն են՝

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը,

Բելառուսի Հանրապետության կողմից՝ Ներքին գործերի նախարարությունը, Պետական սահմանապահ կոմիտեն:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավասու մարմինների կամ դրանց

անվանումների փոփոխությունների մասին Կողմերը անհապաղ տեղեկացնում են միմյանց դիվանագիտական ուղիներով: Նման փոփոխությունները չեն համարվում փոփոխություններ սույն Համաձայնագրի 20-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով:

3. Համաձայնագրի կիրարկման նպատակներով Կողմերի պետությունների իրավասու մարմինները միմյանց հետ փոխգործակցում են անմիջականորեն:

4. Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարությունն ուսումնասիրում է Բելառուսի Հանրապետության քաղաքացիների, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցերը, ինչպես նաև ուղարկում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման, տարանցման վերաբերյալ հայցեր:

Բելառուսի Հանրապետության պետական սահմանապահ կոմիտեն ուսումնասիրում է տարանցման վերաբերյալ հայցերը:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունն ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցերը, ինչպես նաև ուղարկում է Բելառուսի Հանրապետության քաղաքացիների, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման, տարանցման վերաբերյալ հայցեր:

6. Կողմերի պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր հաղորդում են իրենց կոնտակտային տվյալները:

7. Կողմերի պետությունների իրավասու մարմինները միմյանց անհապաղ գրավոր տեղեկացնում են իրենց կոնտակտային տվյալների փոփոխությունների

մասին:

Հոդված 3

Կողմերի պետությունների քաղաքացիների հետընդունումը

1. Հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի հայցով ընդունում է այն անձանց, որոնք հայցող Կողմի պետության տարածք մուտք են գործել կամ այդ պետության տարածքում գտնվում են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ելքի և գտնվելու հարցերին առնչվող՝ տվյալ պետության օրենսդրության խախտմամբ, եթե պարզվել է, որ նրանք հայցվող Կողմի պետության քաղաքացիներ են կամ հայցող Կողմի պետության տարածք մուտք գործելուց հետո զրկվել են այդ պետության քաղաքացիությունից և չեն ստացել այլ պետության քաղաքացիություն:

2. Փաստաթղթերի ցանկը, որոնց հիման վրա որոշվում է անձի՝ հայցվող Կողմի պետության քաղաքացիություն ունենալը, սահմանված է սույն Համաձայնագրի 1-ին Հավելվածում:

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում Կողմերը դիվանագիտական ուղիներով փոխանակում են այդ փաստաթղթերի օրինակները: Հետագայում Կողմերից յուրաքանչյուրը դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին այդ փաստաթղթերում ցանկացած փոփոխության մասին:

3. Եթե սույն Համաձայնագրի 1-ին Հավելվածով նախատեսված փաստաթղթերից ոչ մեկը չի կարող ներկայացվել, Կողմերի պետությունների իրավասու մարմինները պայմանավորվում են հետընդունման ենթակա անձի հետ հայցող Կողմի պետության տարածքում հարցազրույց անցկացնելու մասին՝ նրա քաղաքացիության մասին սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան տեղեկություններ ստանալու նպատակով:

4. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված անձն ունի հայցվող Կողմի

պետության քաղաքացու անձը հաստատող վավերական փաստաթուղթ, ապա սույն Համաձայնագրի 7-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան հետընդունման վերաբերյալ հայց ուղարկել չի պահանջվում: Կողմերի պետությունների իրավասու մարմիններն այդ անձի փոխանցման օրվա մասին միմյանց տեղեկացնում են ոչ ուշ, քան նրա ելքի օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

Հոդված 4

Կողմերի պետությունների քաղաքացիների հարցազրույցը և փաստաթղթավորումը

1. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձի հետ հայցող Կողմի պետության իրավասու մարմնի հայցի հիման վրա հարցազրույց անցկացնելու հիմնական պարտավորությունը դրվում է հայցող Կողմի տարածքում գտնվող հայցվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի վրա:

2. Հարցազրույցն անցկացվում է սույն Համաձայնագրի 2-րդ Հավելվածին համապատասխան կազմված ձևով՝ հայցող կողմի տարածքում գտնվող հայցվող կողմի դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից հարցազրույցն անցկացնելու վերաբերյալ հարցումը ստանալու օրվանից 10 (տասը) օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

3. Հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում համաձայնեցվում են Կողմերի պետությունների իրավասու մարմինների կամ հայցվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջև:

4. Հայցվող Կողմի դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն հարցազրույցն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրացուցային օրը չգերազանցող ժամկետում հայցվող Կողմի պետության և հայցող Կողմի պետության իրավասու

մարմիններին գրավոր ծանուցում է հարցազրույցի արդյունքների մասին:

5. Հիմքերի առկայության դեպքում՝ հայցվող Կողմի պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը հետընդունման ենթակա անձին տրամադրում է հայցվող Կողմի պետության տարածք մուտք գործելու համար անհրաժեշտ փաստաթուղթ, որի գործողության ժամկետը դրա տրամադրման օրվանից կազմում է 30 (երեսուն) օրացուցային օր:

Հոդված 5

Երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունումը

1. Հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի հայցի հիման վրա ընդունում է երրորդ պետության քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, որոնք հայցող Կողմի պետության տարածք մուտք են գործել կամ այդ պետության տարածքում գտնվում են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ելքի և գտնվելու հարցերին առնչվող՝ տվյալ պետության օրենսդրության խախտմամբ, եթե ներկայացվել են ապացույցներ այն մասին, որ այդ անձը՝

1) հայցվող Կողմի պետության տարածքից անմիջապես հայցող Կողմի պետության տարածք է մուտք գործել օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ելքի և գտնվելու հարցերին առնչվող հայցող Կողմի պետության օրենսդրության խախտմամբ,

2) հետընդունման վերաբերյալ հարցումն ուղարկելու պահին ունի հայցվող Կողմի պետության տարածքում բնակության վավեր թույլտվություն:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հետընդունման պարտավորությունը չի կիրառվում, եթե երրորդ պետության քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը՝

1) օրինական հիմքերով ժամանել է հայցող Կողմի պետության տարածք ոչ

վիզային կարգով՝ միջազգային պայմանագրին համապատասխան, որի մասնակից է հայցող Կողմի պետությունը,

2) հայցող Կողմի պետության տարածք ժամանելուց անմիջապես առաջ գտնվել է բացառապես հայցվող Կողմի պետության տարածքում միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում,

3) մուտք գործելու պահին ունեցել է հայցող Կողմի պետության լիազորված մարմնի կողմից տրված բնակության վավերական թույլտվություն:

3. Երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման հիմքերի առկայությունը նշող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը սահմանված է սույն Համաձայնագրի 3-րդ Հավելվածում:

4. Կողմերի պետությունների իրավասու մարմինները փոխադարձության հիմքով ձգտում են սահմանափակել երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման դեպքերը, եթե հնարավոր է նրանց վերադարձնել անմիջապես իրենց քաղաքացիության պատկանելության կամ մշտական բնակության պետություններ:

Հոդված 6

Երրորդ պետությունների քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթուղթ տրամադրելը

Այն դեպքում, երբ երրորդ պետության քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չունի անձը հաստատող փաստաթուղթ, և այդ անձի քաղաքացիության կամ մշտական բնակության պետության լիազորված մարմնի կողմից այդպիսի փաստաթղթի տրամադրման հնարավորություն չկա, հետընդունման վերաբերյալ հայցին տրված դրական պատասխանն ստանալուց հետո հայցող Կողմի պետության իրավասու մարմինը հայցվող Կողմի պետության տարածք մուտք գործելու համար այդ անձին տրամադրում է հետընդունման

նպատակով ուղևորության փաստաթուղթ՝ ձևը սահմանված է սույն Համաձայնագրի 4-րդ Հավելվածով, որը հայցվող Կողմի համար ընդունելի է իր տարածք մուտք գործելիս:

Հոդված 7

Հետընդունման վերաբերյալ հայցերի ուղարկման և քննարկման ժամկետները

1. Երրորդ պետության քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի կողմից անմիջապես հայցվող Կողմի պետության իրավասու մարմին է ուղարկվում հայցող Կողմի պետության տարածք տվյալ անձի անօրինականորեն մուտք գործելու կամ հայցող Կողմի պետության տարածքում անօրինականորեն գտնվելու փաստը և (կամ) նրա անձը պարզելու օրվանից 180 (հարյուր ութսուն) օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

2. Երրորդ պետության քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցը, որոնց փախստականի կարգավիճակ, լրացուցիչ պաշտպանություն կամ ապաստան տրամադրելու մասին միջնորդությունը հայցող Կողմի պետության իրավասու մարմինների քննարկմանն է ներկայացվել, հայցող Կողմի պետության իրավասու մարմնի կողմից ուղարկվում է հայցող Կողմի պետության տարածք անօրինականորեն մուտք գործելու կամ հայցող Կողմի պետության տարածքում անօրինականորեն գտնվելու փաստը կամ անձը պարզելու օրվանից 24 (քսանչորս) ամիսը չգերազանցող ժամկետում:

3. Կողմերի պետությունների իրավասու մարմինները հետընդունման վերաբերյալ հայցն ստանալու օրվա մասին միմյանց տեղեկացնում են 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվության փոխանցման տեխնիկական միջոցներով:

4. Երրորդ պետությունների քաղաքացիների կամ քաղաքացիություն

չունեցող անձանց առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցն ստանալու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը տալիս է այդ անձանց ընդունելու համաձայնություն կամ հիմնավորված կերպով մերժում է նրանց ընդունել, եթե հայցվող Կողմի պետության իրավասու մարմնի կողմից պարզվում է, որ բացակայում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով և 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված անհրաժեշտ պայմանները:

Հետընդունման վերաբերյալ հայցին ժամանակին պատասխանելուն խոչընդոտող իրավական կամ փաստացի հանգամանքների առկայության դեպքում հայցվող Կողմի պետության իրավասու մարմնի հիմնավորված դիմումի հիման վրա պատասխանելու ժամկետը երկարացվում է հետընդունման վերաբերյալ հայցը ստանալու օրվանից մինչև 60 (վաթսուն) օրացուցային օր:

5. Սույն հոդվածի 1-4-րդ կետերում նախատեսված փաստաթղթերում պարունակվող անձնական տվյալների փոխանցումը կատարվում է սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 8

Հետընդունման վերաբերյալ հայցը

1. Սույն Համաձայնագրի 5-րդ Հավելվածին համապատասխան ձևով կազմված հետընդունման վերաբերյալ հայցը հայցող Կողմի պետության իրավասու մարմինը հայցվող Կողմի պետության իրավասու մարմին է ուղարկում միայն փոստային կապի միջոցով՝ տեղեկատվության փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

2. Կողմերի քաղաքացիների հետընդունման վերաբերյալ հայցին կցվում են հայցող Կողմի տրամադրության տակ եղած՝ սույն Համաձայնագրի 1-ին Հավելվածով սահմանված փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների պատճենները, որոնց առկայությունը հաստատում է կամ հիմք է տալիս

ենթադրելու, որ հետընդունման ենթակա անձն ունի հայցվող Կողմի պետության քաղաքացիություն:

3. Երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման վերաբերյալ հայցին կցվում են հայցող Կողմի տրամադրության տակ եղած՝ սույն Համաձայնագրի 3-րդ Հավելվածով սահմանված փաստաթղթերի և տեղեկությունների պատճենները, որոնց առկայությունը հաստատում է կամ հիմք է հանդիսանում ենթադրելու, որ առկա են այդ անձանց հետընդունման հիմքերը:

4. Անհրաժեշտության դեպքում հայցող Կողմի պետության իրավասու մարմինը հետընդունման վերաբերյալ հայցի «Բ» կետում նշում է լրացուցիչ տեղեկություն անձի առանձնահատուկ վտանգավորության և նրա առողջության վիճակի մասին:

5. Հետընդունման վերաբերյալ հայցի պատասխանը հայցվող Կողմի պետության իրավասու մարմնի կողմից հայցող Կողմի պետության իրավասու մարմին ուղարկվում է գրավոր՝ տեղեկատվության փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ և փոստային կապի միջոցով՝ սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

Հոդված 9

Տարանցման վերաբերյալ հայցերի ներկայացման և քննարկման ժամկետները

1. Հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի հայցի հիման վրա թույլատրում է երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, որոնց հանձնումը հետընդունման կարգով երրորդ պետություններ կատարվում է հայցվող Կողմի պետության տարածքով, եթե հայցող Կողմի պետության իրավասու մարմինը երաշխավորում է, որ սույն կետում նշված

անձանց կտրամադրվի երրորդ պետության տարածք անարգել մուտք գործելու հնարավորություն՝ անկախ դրա՝ տարանցման կամ նշանակման պետություն լինելու հանգամանքից:

2. Տարանցման վերաբերյալ հայցը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի կողմից ուղարկվում է նախապես, սակայն ոչ ուշ, քան տարանցման նպատակով հայցվող Կողմի պետության տարածք անձի մուտք գործելու ենթադրվող օրվանից 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ, եթե Կողմերի պետությունների իրավասու մարմինները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ բան չեն պայմանավորվում:

3. Հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը տարանցման վերաբերյալ հայցը ստանալու օրվանից 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում տալիս է տարանցման համար համաձայնություն կամ տարանցումն իրականացնելու հիմնավորված մերժում:

Հոդված 10

Տարանցման վերաբերյալ հայցը

1. Սույն Համաձայնագրի 6-րդ Հավելվածին համապատասխան ձևով կազմված տարանցման վերաբերյալ հայցը հայցող Կողմի պետության իրավասու մարմինը հայցվող Կողմի պետության իրավասու մարմին ուղարկում է տեղեկատվության փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ և այն փոստային կապի միջոցով, որի կոնտակտային տվյալներն ստացվել են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերին համապատասխան:

2. Անհրաժեշտության դեպքում հայցող Կողմի պետության իրավասու մարմինը տարանցման վերաբերյալ հայցի «Բ» կետում նշում է լրացուցիչ տեղեկություն անձի առանձնահատուկ վտանգավորության և նրա առողջության վիճակի մասին:

3. Տարանցման վերաբերյալ հայցի պատասխանը հայցվող Կողմի

պետության իրավասու մարմնի կողմից հայցող Կողմի պետության իրավասու մարմին ուղարկվում է գրավոր՝ տեղեկատվության փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ և փոստային կապի միջոցով, որի կոնտակտային տվյալներն ստացվել են սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերին համապատասխան:

4. Հայցվող Կողմի իրավասու մարմինը կարող է մերժել տարանցումը այդ դեպքում, եթե՝

1) առկա է վտանգ, որ նշանակման վայրի պետությունում կամ տարանցման պետությունում երրորդ պետության քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կենթարկվի խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, մահապատժի կամ հետապնդման՝ ռասայական, կրոնական, ազգային պատկանելության հատկանիշի հիմքով, ինչպես նաև որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների հատկանիշի հիմքով,

2) հայցվող Կողմի տարածքում այդ անձանց գտնվելն անցանկալի է, այդ թվում՝ ազգային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ հայցվող Կողմի քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանության նկատառումներից ելնելով:

Հոդված 11

Հետընդունման կամ տարանցման ընթացակարգը

1. Կողմերի պետությունների քաղաքացիների հետընդունումը, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունումը, ինչպես նաև երրորդ պետությունների քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը կատարվում են պետական սահմանի անցակետերում:

2. Անձանց փոխանցումը, որոնց առնչությամբ հայցվող Կողմը տվել է

հետընդունման համաձայնություն, կատարվում է այդ համաձայնությունը հայցող Կողմի ստանալու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, եթե Կողմերի կողմից պետությունների իրավասու մարմինները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ բան չեն պայմանավորվում:

Հետընդունման կամ տարանցման օրը և ժամը, ինչպես նաև այդ նպատակով օգտագործվող՝ Կողմերի պետությունների միջազգային օդանավակայաններում պետական սահմանի անցակետերը որոշվում են Կողմերի պետությունների իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետը կարող է երկարացվել, եթե դրանում նշված անձինք հայցվող Կողմի պետության իրավասու մարմինն չեն կարող փոխանցվել փոխանցմանն օբյեկտիվ կերպով խոչընդոտող հանգամանքների ի հայտ գալու պատճառով, որի մասին ուղարկվում է համապատասխան գրավոր ծանուցում:

4. Հայցող Կողմի պետության իրավասու մարմինը հետընդունման ենթակա անձի փոխանցման ծրագրվող օրվանից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ հայցվող Կողմի իրավասու մարմինն ծանուցում է փոխանցման պայմանների մասին:

Հայցվող Կողմի պետության իրավասու մարմինն այդ տեղեկատվությունն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օր հետո հայցող Կողմի իրավասու մարմինն ծանուցում է փոխանցման պայմանների ընդունելի լինելու մասին:

5. Այն դեպքում, երբ հայցող Կողմի իրավասու մարմնի առաջարկած փոխանցման պայմանները հայցվող Կողմի իրավասու մարմնի համար անընդունելի են, ապա հնարավորինս կարճ ժամկետում պետք է համաձայնեցվեն փոխանցման այլ պայմաններ:

6. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց՝ հայցվող Կողմի պետության տարածքում գտնվելը կապված է պետական սահմանի օդային անցակետի տարանցիկ գոտու սահմաններից նրանց

դուրս գալու անհրաժեշտության հետ, ապա հայցվող Կողմի պետության իրավասու մարմինները, հայցող Կողմի պետության իրավասու մարմինների խնդրանքով, տրամադրում են լրացուցիչ անվտանգություն և այդ անձանց ժամանակավոր պահելու համար տարածք:

7. Հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը, չնայած տարանցման համար տրված թույլտվությանը, սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց կարող է վերադարձնել հայցող Կողմի իրավասու մարմին, եթե հայցվող Կողմի միջազգային օդանավակայան նրանց ժամանելուց հետո նրանց առնչությամբ պարզվեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հանգամանքները, ինչպես նաև այն դեպքում, եթե նշանակման կամ տարանցման պետության տարածք անարգել մուտք գործելն այլևս հնարավոր չէ երաշխավորված համարել: Հայցող Կողմի իրավասու մարմինն այդ դեպքում անհապաղ հետ է ընդունում երրորդ պետության քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին:

8. Կողմերի իրավասու մարմինները փոխադարձության հիմքով ձեռնարկում են միջոցներ՝ երրորդ պետությունների այն քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող այն անձանց տարանցման դեպքերը սահմանափակելու համար, որոնք կարող են վերադարձվել անմիջապես իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության պետություններ:

Հոդված 12

Սխալմամբ կատարված հետընդունումը

1. Հայցող Կողմի պետության իրավասու մարմինն իր փոխանցած անձին հետ է ընդունում նրա փոխանցման օրվանից 45 (քառասունհինգ) օրացուցային օրվա ընթացքում, եթե պարզվել է, որ բացակայում են նրա հետընդունման՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով և 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերը: Այդ դեպքում հայցվող Կողմի պետության իրավասու

մարմինը հայցող Կողմի պետության իրավասու մարմինն փոխանցում է այդ անձին առնչվող՝ իր տրամադրության տակ եղած նյութերը:

2. Այդ անձինք վերադարձվում են հայցող Կողմի պետության միջազգային օդանավակայաններում՝ պետական սահմանի անցակետերում:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձի փոխանցման դեպքում հայցվող Կողմի պետության իրավասու մարմինը փոխանցվող անձին հետընդունման նպատակով տրամադրում է սույն Համաձայնագրի 4-րդ հավելվածով սահմանված ձևի ուղևորության փաստաթուղթ:

Հոդված 13

Հետընդունման կամ տարանցման ենթակա անձի ուղեկցումը

1. Անձի հետընդունումը կամ տարանցումը ուղեկցմամբ կատարելու անհրաժեշտության դեպքում հայցող Կողմի պետության իրավասու մարմինը հայցվող Կողմի պետության իրավասու մարմնին հաղորդում է ուղեկցող անձանց անունները, ազգանունները և պաշտոնները, նրանց անձնագրերի տեսակը, համարը, տրամադրման ամսաթիվը և վավերականության ժամկետը, ինչպես նաև հայցվող Կողմի պետության տարածքում նրանց գտնվելու ենթադրվող ժամկետները:

2. Ուղեկցող անձինք պետք է լինեն քաղաքացիական հագուստով և իրենց մոտ ունենան վավերական անձնագրեր ու փաստաթղթեր, որոնք կվկայեն հետընդունման կամ տարանցման վերաբերյալ համաձայնեցված պայմանավորվածության մասին:

3. Ուղեկցող անձինք իրենց մոտ չեն կարող ունենալ զենք և այլ իրեր, որոնք հայցվող Կողմի պետության տարածքում սահմանափակված կամ շրջանառությունից հանված են:

4. Ուղեկցող անձինք հայցվող Կողմի պետության տարածքում գտնվելու ժամանակ պահպանում են այդ պետության օրենսդրությունը:

5. Կողմերի պետությունների իրավասու մարմինները միմյանց հետ փոխգործակցում են հայցվող Կողմի տարածքում ուղեկցող անձանց գտնվելու ապահովման հետ կապված բոլոր հարցերում: Ընդ որում, հայցվող Կողմի պետության իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում հնարավոր աջակցություն են ցուցաբերում ուղեկցող անձանց:

6. Անձանց ընդունումն ու փոխանցումը ձևակերպվում են ակտերով՝ սույն Համաձայնագրի 7-րդ հավելվածով սահմանված ձևով:

Հոդված 14

Անձնական տվյալների պաշտպանությունը

1. Հետընդունման ենթակա անձանց անձնական տվյալները, որոնք, սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված, փոխանակում կամ միմյանց փոխանցում են Կողմերի պետությունների իրավասու մարմինները, Կողմերից յուրաքանչյուրի պետությունում ենթակա են պաշտպանության՝ տվյալ պետության օրենսդրության և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցներն են Կողմերի պետությունները:

2. Կողմերի պետությունների իրավասու մարմինները հետընդունման ենթակա անձանց անձնական տվյալները փոխանակում են միայն սույն Համաձայնագրի նպատակներով և ապահովում են դրանց գաղտնիությունը:

Հոդված 15

Ծախսերը

1. Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում և 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց հետընդունման և մինչև հայցվող Կողմի պետության պետական սահմանի անցակետն ուղեկցման հետ կապված ծախսերը կրում է հայցող Կողմն այն դեպքում, եթե ծախսերը չեն կարող վճարել նշված անձինք կամ երրորդ կողմը:

2. Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված անձանց տարանցման և ուղեկցման, ինչպես նաև նրանց հնարավոր վերադարձի հետ կապված ծախսերը կրում է հայցող Կողմն այն դեպքում, եթե ծախսերը չեն կարող կատարել նշված անձինք կամ երրորդ կողմը:

3. Այն անձանց փոխանցման հետ կապված ծախսերը, որոնց հետընդունման հիմքերը բացակայել են, ինչպես նաև մինչև հայցող Կողմի պետության պետական սահմանի անցակետն այդ անձանց հնարավոր ուղեկցման հետ կապված ծախսերը կրում է հայցող Կողմը, եթե այդ ծախսերը չեն կարող կատարվել նշված անձանց կողմից կամ երրորդ անձի կողմից:

Հոդված 16

Համագործակցության սկզբունքները

1. Կողմերի պետությունների իրավասու մարմինները միմյանց փոխադարձաբար օգնություն են տրամադրում սույն Համաձայնագրի դրույթների կատարման հարցերում:

2. Կողմերի պետությունների իրավասու մարմինների հարաբերություններում ծագող և սույն Համաձայնագրի դրույթների կատարման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Կողմերի պետությունների իրավասու մարմինների միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

3. Փոխադարձ պայմանավորվածությամբ՝ Կողմերի պետությունների իրավասու մարմինները կարող են սույն Համաձայնագրի դրույթների իրականացման հետ կապված հարցերով անցկացնել փորձագետների աշխատանքային հանդիպումներ և խորհրդակցություններ:

4. Սույն Համաձայնագիրը չի խոչընդոտում Կողմերի պետությունների իրավասու մարմինների միջև այլ պաշտոնական կամ ոչ պաշտոնական պայմանավորվածությունների հիման վրա անձի վերադարձը:

Հոդված 17

Համագործակցության լեզուն

Եթե Կողմերի իրավասու մարմիններն այլ բան չեն պայմանավորվում, Կողմերի իրավասու մարմինների միջև գրավոր տեղեկատվության անմիջական փոխանակումը, ինչպես նաև խորհրդակցությունները կատարվում են ռուսերեն:

Հոդված 18

Հավելվածները

Սույն Համաձայնագրի 1-7-րդ Հավելվածները կազմում են Համաձայնագրի անբաժանելի մաս:

Հոդված 19

Սույն Համաձայնագրի գործողության կասեցումը և վերականգնումը

1. Յուրաքանչյուր Կողմ ազգային անվտանգության պաշտպանության, հասարակական կարգի ապահովման կամ բնակչության առողջության պահպանման հետ կապված պատճառներով կարող է մասամբ կամ ամբողջությամբ կասեցնել սույն Համաձայնագրի գործողությունը:

2. Սույն Համաձայնագրի գործողության կասեցման կամ վերականգնման մասին մի Կողմը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում է այդ որոշման իրականացումն սկսելուց ոչ ուշ, քան 72 (յոթանասուներկու) ժամ առաջ:

Հոդված 20

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար

մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրը լրանալուց հետո:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով, և գործողությունը դադարում է գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մի Կողմի գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմի ստանալու օրվանից 60 (վաթսուն) օրացուցային օրը լրանալուց հետո:

3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, ձևակերպվում են առանձին արձանագրությամբ, ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

4. Սույն Համաձայնագրի գործողությունը դադարելու դեպքում Կողմերը կարգավորում են դրա գործողության ժամանակահատվածում ծագած պարտավորությունները:

Կատարված է Վիեննա քաղաքում 2021 թվականի հոկտեմբերի 8-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների դեպքում Կողմերը հիմք են ընդունում ռուսերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Բելառուսի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Հավելված 1

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ոեադմիսիայի) մասին» համաձայնագրի

**Կողմերի պետությունների քաղաքացիության առկայության
ապացույցները և Կողմերի պետությունների քաղաքացիության
առկայության մասին ենթադրելու հիմքերը**

1. Բելառուսի Հանրապետության քաղաքացիության առկայությունը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով.

- 1) Բելառուսի Հանրապետության քաղաքացու անձնագիր,
- 2) Բելառուսի Հանրապետության քաղաքացու դիվանագիտական անձնագիր,
- 3) Բելառուսի Հանրապետության քաղաքացու ծառայողական անձնագիր,
- 4) Բելառուսի Հանրապետության նավաստու անձը հաստատող ազգային վկայական,
- 5) Բելառուսի Հանրապետության վերադարձի վկայական:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության առկայությունը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով.

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր,
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դիվանագիտական անձնագիր,
- 3) Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտ,
- 4) Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայական:

3. Անձի՝ Բելառուսի Հանրապետության քաղաքացիություն ունենալու մասին ենթադրելու հիմքեր կան, եթե առկա են՝

1) 1-ին հավելվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը, որոնց գործողության ժամկետը լրացել է,

2) 1-ին հավելվածի 1-ին կետում նշված փաստաթղթերի պատճենները կամ կրկնօրինակները,

3) 1991 թվականի նոյեմբերի 12-ի դրությամբ (ներառյալ) Բելառուսի Հանրապետության տարածքում բնակության վայրի գրանցման մասին դրոշմակնիքով ԽՍՀՄ քաղաքացու անձնագիրը,

4) հետընդունման ենթակա անձի կողմից լրացված դիմումը,

5) վկաների գրավոր պարզաբանումները,

որոնք օրինական հիմքերով վերցվել են համապատասխան իրավասու մարմինների կողմից,

6) պետական մարմինների պաշտոնատար անձանց գրավոր պարզաբանումները,

7) հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցի դրական արդյունքները:

4. Անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու մասին ենթադրելու հիմքեր կան, եթե առկա են՝

1) 1-ին հավելվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերը, որոնց գործողության ժամկետը լրացել է,

2) 1-ին հավելվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերի պատճենները կամ կրկնօրինակները,

3) հետընդունման ենթակա անձի կողմից լրացված դիմումը,

4) վկաների գրավոր պարզաբանումները, որոնք օրինական հիմքերով վերցվել են համապատասխան իրավասու մարմինների կողմից,

5) պետական մարմինների պաշտոնատար անձանց գրավոր պարզաբանումները,

6) հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցի դրական արդյունքները:

Հավելված 2

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման
(ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի

Ձև

Հայցող Կողմի զինանշանը

(հայցող Կողմի իրավասու

(վայրը ևամսաթիվը)

մարմնի անվանումը)

Համարը _____

Ուժ _____

(հայցվող Կողմի իրավասու մարմնի
անվանումը)

Հայց հարցազրույց անցկացնելու մասին

**«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի)
մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան**

Ա. Անձնական տվյալներ՝

Լուսանկար

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել) _____

2. Նախկին ազգանունը _____

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը _____
4. Սեռը և արտաքինի նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, տարբերակիչ նշանները և այլն) _____

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, անձի կողմից օգտագործվող այլ անուններ, որոնցով նա հայտնի է, կամ կեղծանունները) _____

6. Քաղաքացիությունը և լեզուն _____
7. Տեղեկություններ տրված կացության քարտերի, ժամանակավոր բնակության թույլտվությունների կամ վիզաների մասին _____
8. Ընտանեկան դրությունը՝ ամուսնացած չամուսնացած ամուսնալուծված
 այրի: Ամուսնու (կնոջ) անունը (եթե ամուսնացած է) և նրա գտնվելու վայրը _____
Երեխաների (եթե կան) անուններն ու տարիքը և նրանց գտնվելու վայրը _____

9. Հայցող Կողմում գտնվելու վերջին վայրը _____

10. Հայցվող Կողմում բնակության վերջին հասցեն _____

11. Տեղեկություններ տեղաշարժի երթուղիների վերաբերյալ _____

12. Հայցող Կողմի պետության տարածք անձի անօրինական մուտքի կամ նրա տարածքում գտնվելու մասին որոշում ընդունելու հիմքերը

Բ. Փոխանցվող անձին վերաբերող հատուկ հանգամանքներ

1. Առողջական վիճակը (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական հատուկ խնամքի ցուցումները, վարակիչ հիվանդության անվանումը և այլն)

2. Նշում անձի առանձնակի վտանգավորության մասին (կասկածվում է հանցագործության կատարման մեջ, հակված է ագրեսիվ վարքագծի և այլն)

Գ. Քաղաքացիության պատկանելության ապացույցներ (կցվում են)

1. Քաղաքացիության պատկանելությունը հաստատող փաստաթղթերը

(փաստաթղթի տեսակը)

(տրամադրման ամսաթիվը և
վայրը)

(փաստաթուղթը տրամադրած մարմինը)

(գործողության ժամկետը
լրանալու ամսաթիվը)

2. Փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք հիմք են տալիս ենթադրելու
քաղաքացիության պատկանելությունը _____

Դ. Դիտողություններ

Հարցազրույցի անցկացման վայրը _____

(հայցող Կողմի իրավասու մարմնի պաշտոնատար
անձի ստորագրությունը)

(անվան սկզբնատառերը,
ազգանունը)

Կ.Տ.

Հավելված 3

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի

**Երրորդ պետությունների քաղաքացիների
և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար
հիմքերի առկայության ապացույցները**

1. Երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար հիմքերի առկայության ապացույց են ծառայում հետևյալ վավերական փաստաթղթերը.

1) երրորդ պետության քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի անձը հաստատող փաստաթուղթը՝ հայցվող Կողմի պետությունում բնակության իրավունք տվող նշումով,

2) հայցվող Կողմի պետության տարածքում համապատասխան վավերական թույլտվությունը (կացության քարտը),

3) հայցվող Կողմի պետության տված փախստականի վկայականը,

4) հայցվող Կողմի պետության տված ուղևորության փաստաթուղթը,

5) հայցվող Կողմի լիազորված մարմինների տված վավերական վիզան:

2. Երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար հիմքերի առկայության ապացույց են ծառայում հետևյալ նշումները.

1) Կողմերի պետությունների լիազորված մարմինների կողմից կատարված՝ մուտքի (ելքի) մասին նշումը անձը հաստատող և պետական սահմանը հատելու իրավունք տվող ցանկացած փաստաթղթում,

2) Կողմերի լիազորված մարմինների կողմից կատարված՝ մուտքի (ելքի) մասին նշումը կեղծ կամ կեղծված փաստաթղթում:

3. Սույն Հավելվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ապացույցները Կողմերը ճանաչում են առանց լրացուցիչ ձևականությունների:

4. Երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար հիմքերի առկայության անուղղակի ապացույց են ծառայում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) հայցվող Կողմի պետության տարածքում համապատասխան թույլտվությունը (կացության քարտը), փախստականի վկայականը և փախստականի ուղևորության փաստաթուղթը՝ տրված հայցվող Կողմի լիազորված մարմնի կողմից, որոնց գործողության ժամկետը լրացել է առավելագույնը 180 օրացուցային օր առաջ,

2) հայցվող Կողմի տարածքում հայցող Կողմի լիազորված մարմինների կողմից տրված վիզան, որի գործողության ժամկետը ևս լրացել է,

4) պետական մարմնի պաշտոնատար անձի, հետընդունման ենթակա անձի, վկայի գրավոր պարզաբանումը, որն ստացվել է հայցող Կողմի պետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով,

5) ուղետոմսերը, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթուղթ՝ տրված հայցվող Կողմի պետության տարածքում:

5. Սույն Հավելվածի 4-րդ կետում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները ճանաչվում են որպես երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար հիմքեր միայն այն դեպքում, եթե հայցվող Կողմն ապացույցներով չի հերքում դրանք:

6. Կողմերի իրավասու մարմինները փոխանակում են իրենց տրամադրության տակ եղած՝ սույն Հավելվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում նշված

փաստաթղթերի և նշումների օրինակները:

Հավելված 4

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման
(ոեադմիսիայի) մասին» համաձայնագրի

Ձև

Հայցող Կողմի զինանշանը

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

հետընդունման նպատակներով

վավերական է մեկանգամյա ելքի/մուտքի համար

(չվերաբերող տարբերակը ջնջել)

_____ -ից

(պետության անվանումը)

դեպի _____

(պետության անվանումը)

Ազգանունը _____

Անունը _____

Ծննդյան ամսաթիվը _____ Սեռը _____

Հասակը _____

Քաղաքացիությունը _____

Հատուկ նշանները _____

Լուսանկար

Սույն ուղևորության փաստաթուղթը վավերական է

20___ թվականի _____-ից

(ամիսը)

մինչև 20___ թվականի _____-ը

(ամիսը)

Տրամադրած մարմինը _____

Տրամադրման հիմքը _____

Տրամադրման ամսաթիվը 20___ թ. _____

(ամիսը)

Պաշտոնատար անձի ստորագրությունը _____

Կ.Տ.

Հավելված 5
«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման
(ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի

Ձև

Հայցող Կողմի գինանշանը

(հայցող Կողմի իրավասու մարմնի
անվանումը)

(վայրը և ամսաթիվը)

Համարը _____

Ում _____

(հայցվող Կողմի իրավասու մարմնի
անվանումը)

Հետընդունման վերաբերյալ հայց

**«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի)
մասին» համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան**

Ա. Անձնական տվյալներ՝

Լուսանկար

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել) _____

2. Նախկին ազգանունը _____

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը _____
4. Սեռը և արտաքինի նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, տարբերակիչ նշանները և այլն) _____

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, անձի կողմից օգտագործվող այլ անուններ, որոնցով նա հայտնի է, կամ կեղծանունները) _____
6. Քաղաքացիությունը և լեզուն _____
7. Տեղեկություններ տրված կացության քարտերի, ժամանակավոր բնակության թույլտվությունների կամ վիզաների մասին _____
8. Ընտանեկան դրությունը՝ ամուսնացած չամուսնացած ամուսնալուծված
 այրի: Ամուսնու (կնոջ) անունը (եթե ամուսնացած է) և նրա գտնվելու վայրը _____

Երեխաների (եթե կան) անուններն ու տարիքը և նրանց գտնվելու վայրը _____

9. Հայցող Կողմում գտնվելու վերջին վայրը _____

10. Հայցվող Կողմում բնակության վերջին հասցեն _____

11. Տեղեկություններ տեղաշարժի երթուղիների վերաբերյալ _____

12. Հայցող Կողմի տարածք անձի անօրինական մուտքի կամ նրա տարածքում գտնվելու մասին որոշում ընդունելու հիմքերը _____

Բ. Փոխանցվող անձին վերաբերող հատուկ հանգամանքներ

1. Առողջական վիճակը (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական հատուկ խնամքի ցուցումները, վարակիչ հիվանդության անվանումը և այլն)

2. Նշում անձի առանձնակի վտանգավորության մասին (կասկածվում է հանցագործության կատարման մեջ, հակված է ագրեսիվ վարքագծիև այլն)

Գ. Քաղաքացիության պատկանելության ապացույցներ (կցվում են)

1. Քաղաքացիության պատկանելությունը հաստատող փաստաթղթերը

(փաստաթղթի տեսակը)

(տրամադրման ամսաթիվը և վայրը)

(փաստաթուղթը տրամադրած մարմինը)

(գործողության ժամկետը
լրանալու ամսաթիվը)

2. Փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք հիմք են տալիս ենթադրելու
քաղաքացիության պատկանելությունը _____

Դ. Դիտողություններ

(հայցող Կողմի իրավասու մարմնի պաշտոնատար
անձի ստորագրությունը)

(անվան սկզբնատառերը,
ազգանունը)

Կ.Տ.

Հավելված 6
«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման
(ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի

Ձև

Հայցող Կողմի գինանշանը

(հայցող Կողմի իրավասու մարմնի
անվանումը)

(վայրը և ամսաթիվը)

Համարը _____

Ում _____

(հայցվող Կողմի իրավասու մարմնի
անվանումը)

Տարանցման վերաբերյալ հայց

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի)
մասին» համաձայնագրի 10-րդ հոդվածին համապատասխան

Ա. Անձնական տվյալներ՝

Լուսանկար

1. Լրիվ անունը (ազգանունընդգծել) _____

2. Նախկին ազգանունը _____

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը _____
4. Սեռը և արտաքինի նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, տարբերակիչ նշանները և այլն) _____

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, անձի կողմից օգտագործվող այլ անուններ, որոնցով նա հայտնի է, կամ կեղծանունները) _____
6. Քաղաքացիությունը և լեզուն _____
7. Ուղևորության փաստաթղթի տեսակը և համարը _____

Բ. Փոխանցվող անձին վերաբերող հատուկ հանգամանքներ

1. Առողջական վիճակը (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական հատուկ խնամքի ցուցումները, վարակիչ հիվանդության անվանումը և այլն) _____

2. Նշում անձի առանձնակի վտանգավորության մասին (կասկածվում է հանցագործության կատարման մեջ, հակված է ագրեսիվ վարքագծի և այլն) _____

Գ. Տարանցման գործողություն

1. Նշանակման պետությունը _____

2. Տարանցման հնարավոր այլ պետություններ _____

3. Պետական սահմանը հատելու ենթադրվող վայրը, ամսաթիվը, ժամը _____

4. Տեղեկություններ ուղեկցող անձանց վերաբերյալ _____

5. Տարանցման երթուղին և ժամը _____

Դ. Դիտողություններ

Անձի ընդունումը երաշխավորված է այլ տարանցման պետության և (կամ) նշանակման պետության կողմից:

(հայցող Կողմի իրավասու մարմնի պաշտոնատար
անձի ստորագրությունը)

(անվան սկզբնատառերը,
ազգանունը)

Կ.Տ.

Հավելված 7

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի
Հանրապետության Կառավարության միջև հետընդունման
(ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի

Ձև

ԱԿՏ

անձի ընդունման-փոխանցման

20____ թվականի _____-ին _____

_____անցակետում կազմվել է սույն ակտն այն մասին, որ

(պաշտոնը, զինվորական կոչումը, ազգանունը, անվան
սկզբնատառերը)

_____ մի կողմից,և,

(պաշտոնը, զինվորական կոչումը, ազգանունը, անվան
սկզբնատառերը)

մյուս կողմից, ժամը _____ — — թուրքին առաջինը փոխանցել, իսկ երկրորդն
ընդունել է

_____ քաղաքացի

(քաղաքացիության պատկանելության պետությունը)

Ազգանունը, անունը, հայրանունը _____

Ծննդյան ամսաթիվը և վայրը _____

Բնակության վայրը (հասցեն) _____

Սեռը _____

Մայրենի լեզուն (լեզուները, որոնց տիրապետում է) _____

Անձը հաստատող փաստաթուղթը _____

(փաստաթղթի տեսակը, սերիան, համարը, ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել,
գործողության ժամկետը)

Անձի հետ փոխանցվող անչափահաս երեխաները

1. _____

(ԱԱՀ, ծննդյան ամսաթիվ)

2. _____

(ԱԱՀ, ծննդյան ամսաթիվ)

Տվյալներ առողջական վիճակի մասին

(հիվանդության լատինատառ անվանումը, անհրաժեշտության դեպքում՝ հատուկ
բժշկական խնամքի մասին նշում)

Անձի հետ փոխանցվել են հետևյալ նյութական արժեքները

(տրանսպորտային միջոցներ, բեռ, իրեր և այլն)

Կողմերի պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների դիմումներ
(տեղեկատվություն)

(պարտադիր է նշել դիմումների առկայության կամ բացակայության մասին,
ինչպես նաև ազգանունը, անվան սկզբնատառերը, զինվորական կոչումը,
պաշտոնը, ստորագրությունը)

Անձի հնարավոր դիմում կամ բողոք

(պարտադիր է նշել դիմումի կամ բողոքի առկայության կամ բացակայության
մասին, ինչպես նաև ներկայացնող անձի ստորագրությունը)

Ակտը կազմված է երկու բնօրինակով՝ ռուսերենով

Փոխանցեց _____
(պաշտոնը)

Ընդունեց _____
(պաշտոնը)

(զինվորական կոչումը, ազգանունը,
անվան սկզբնատառերը,
ստորագրությունը)

(զինվորական կոչումը, ազգանունը,
անվան սկզբնատառերը,
ստորագրությունը)

СОГЛАШЕНИЕ

между Правительством Республики Армения и Правительством Республики Беларусь о реадмиссии

Правительство Республики Армения и Правительство Республики Беларусь, именуемые в дальнейшем Сторонами,

руководствуясь стремлением развивать добрососедские, партнерские взаимоотношения между государствами Сторон, а также укреплять взаимное сотрудничество в различных областях, в том числе в области борьбы с нелегальной миграцией и трансграничной организованной преступностью,

будучи убеждены, что введение в действие согласованных Сторонами принципов и норм, определяющих порядок передачи, принятия и возврата лиц, находящихся на территории их государств в нарушение порядка въезда, выезда, пребывания и проживания иностранных граждан и лиц без гражданства, является важной частью регулирования процессов миграции,

уважая суверенное право каждой из государств Сторон в соответствии с их законодательствами устанавливать ответственность за нелегальную миграцию на своих территориях или через них иностранных граждан и лиц без гражданства,

подтверждая приверженность целям и принципам, заложенным во Всеобщей декларации прав человека от 10 декабря 1948 года, в Конвенции о статусе беженцев от 28 июля 1951 года и Протоколе, касающемся статуса беженцев, от 31 января 1967 года, Конвенции

против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания от 10 декабря 1984 года и Международным пакте о гражданских и политических правах от 16 декабря 1966 года, а также в международных договорах по вопросам выдачи (экстрадиции),

согласились о нижеследующем:

Статья 1

Определения

Понятия, используемые в настоящем Соглашении, означают следующее:

реадмиссия – передача компетентными органами государства запрашивающей Стороны и прием компетентными органами государства запрашиваемой Стороны в порядке, на условиях и в целях, предусмотренных настоящим Соглашением, лиц, въехавших или находящихся на территории государства запрашивающей Стороны в нарушение законодательства этого государства по вопросам въезда, выезда и пребывания иностранных граждан и лиц без гражданства;

запрашивающая Сторона – Сторона, компетентный орган государства которой направляет запрос о реадмиссии или транзите в соответствии с настоящим Соглашением;

